ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

[illegible]

Հրատարակվում է ամէն շաբաթ օր, մի մի թերթ: Տարեկան բաժանորդագրութեան գինն է 6 ռուբլի:

Զ. ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍԻ 6 1863 ԱՄԻ № 21.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յունիսի 8ին Ս. Պետերբուրգ: Այսօրվան եկած լրագիրները հաստատում են, որ առաջարկութեան թըղթերը ուղարկած են Ս. Պետերբուրգ և միևնոյն ժամանակ համբաւ են բերել թէ խաղաղասիրական են նըպատակները այն տէրութիւնների, որոնք յանձնառու են եղել գլխաւորապէս բանակցութիւններ բանալ Լեհաստանը հանգստացնելու համար: Մենք վաղ արդէն գիտէինք կոմս Ռոսսէլի, Լորդերի ժողովում, արած բացատրութիւններից, որ Անգղիայի կառավարութիւնը երկիւղ է քաշում իր վերայ առնել պատասխանատուութիւնը Եւրոպական խաղաղութիւնը խանգարելու համար, ուստի և կամենում է միայն դեսպանագիտական միջոցով բաւականանալ: Երէկվան եկած հեռագրական լուրը Վիեննայից ցոյց է տալիս թէ Կարլ—Լուդովիկոս արշիդուքսը արքունի խորհրդարանի ժողովում ասել է, որ Աւստրիայի կառավարութիւնը ամէն միջոց 'ի գործ է դնում եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար: Իսկ ինչոր Ֆրանսիային վերաբերի, մենք չունենք պաշտօնական արտայայտութիւն, թէ ցանկանում է խաղաղութիւնը պահպանել, ուստի և առ ժամանակ պէտք է հաւատ ընծայենք մասնաւոր վկայութիւններին: «Times» լրագրի փարիզեան թղթակիցը ասում է, որ ինչպէս երևում է այնտեղի պաշտօնական ընկերութիւնների համոզմունքներից, Նապոլէոն Գ. երբէք չէ մտածել Լեհաստանի խընդիրը 'ի գործածել իբրև յարմար միջոց իր պատերազմական նպատակներին հասնելու համար: Եթէ նա ունենար այնպիսի նպատակներ (ասում են պաշտօնական քաղաքագէտները), նա այնպիսի հաստատութեամբ չէր աշխատել ներգործելու, 'ի միասին Աւստրիայի և Անգղիայի հետ համաձայնութեամբ, առաջարկութիւնների նպատակին հասնելու համար: Նա բաւական էր թողցել այն պատասխանով, որով Պետերբուրգի արքունիքը տուել էր Դրուէն-դէ-Լիւյսի առաջարկութեան թղթին: Լեհաստանի հարցը անմիջական յարաբերութիւն չունի Ֆրանսիայի հետ, որովհետև ապստամբութեան ասպարէզը շատ հեռու է նրանից և սորա գործողութիւնները չեն կարող նորա համար այնպէս զգալի լինել, ինչպէս Աւստրիայի համար ու Ֆրանսիան ունէր առիթներ հեռանալու դեսպանագիտական միայն ներգործութիւններից և քաղաքական նպատակների համար պահպանել կատարեալ ազատութիւն: Ֆրանսիան (ինչպէս յայտնում են կայսերական քաղաքականութեան նոյն իսկ պաշտօնական քաղաքագէտները) ոչ մի օգուտ չէ տեսնում իր համար պատերազմից, որի ոչ վերջը և ոչ հետևանքը կարող է որ և իցէ մարդ գուշակել, մանաւանդ, որ Ֆրանսիան ստացաւ բաւական անուն այս կայսեր ժամանակ Ղրիմում, Իտալիայում և Մեքսիկայում և թէ նա իր սահմանները ընդարձակելով ոչինչ օգուտ չէ ստանալ, այլ նորա մեծ շահն ու օգուտը, ինչպէս ինքը կայսրը ասաց իր ճառի մէջ յունվար ամսին, են ստոր կառավարութիւնների հաւատարմութիւնը և յարգը:

Յայտնի բան է, հակառակ այս խաղաղասիրական վկայութիւններին կան և պատերազմական զրութիւնները Պալմերստոնի «Morning Post»լրագրի, որնոր յայտնում է իր ցանկութիւնը, որ ամենից աւելի համարձակ տէրութիւնը (Ֆրանսիան) ձեռք վրայ հանելից առաջ սկսէ աւելի վճռողական գործողութիւններ, որովհետև, եթէ Ռուսաց կառավարութեան պատասխանը առաջարկութեան թղթի մասին կ'լինի անբաւարարական, անհնարին է գործքը թողնել այն վիճակի մէջ, ինչ դրութիւն որ նա այժմ ունի:

—Մի գերմանացի լրագրին, Լեհացի յեղափոխականների գործակատարների գործունէութեան մասին Դանուբեան իշխանութիւններումը հաղորդում են Եաշից յետագայ տեղեկութիւնները: «Լեհացի յեղափոխականների գործակատարների գործունէութիւնը երկու իշխանութիւններումը այս վերջին ժամանակներս շատ զօրացաւ և երկու ուղղութիւն ստացաւ: Մի քանի գործակատարները, իբրև թէ Վարշավայի ազգային մասնաժողովի յանձնարարութեամբը հաւաքում են հարկ այն Լեհերից, որոնք բնակում են յիշեալ իշխանութիւններումը և այս հարկը, ինչպէս ինձ հաստատապէս յայտնի է, միայն Մոլդավիայումն է մինչև **100,000** դուկատ: Միւսները գնում են զէնքեր, որոնք մեծ թւով պատրաստ պահում են զանազան տեղերում, սպասելով յեղափոխականների գլխաւոր առաջնորդների նոր կարգադրութիւններին: Մոլդավիայի իշխանութիւնները սառնութեամբ նայում են յեղափոխականների գործողութեանց վերայ և ոչ մի արգելք կամ խոչընդոտ չեն պատճառում նրանց: Վերջին ժամանակը այստեղ ձեռից ձեռն անցնում է Փարիզում բնակող կոմս Զամոյսկու նամակը, որ գրած է գնդապետ Յորդանին, որնոր Սադըք փաշայի զինուորական կառավարութեան գլխաւոր պաշտօնատարն է: Այս նամակին մեծ նշանակութիւն են տալիս: Կոմսը խնդրում է գնդապետ Յորդանին, որ սա կարդայ նամակը Սադըք փաշայի առաջին և ասի նրան, որ այս հանդիսաւոր և նշանաւոր րոպէին Լեհը, պէտք է, մոռանայ իր անձնական զրկանքը: Սորա հետ միասին կոմս Զամոյսկին յանձնում է գնդապետ Յորդանին, որ հաւատացնէ Լեհ աքսորականներուն, թէ Լեհաստանի վերածնութեան ժամը շատ հեռու չէ:

11ին յունիսի **1863** թուականի, «Constitutionnel» անուն պաշտօնական լրագիրը հաստատում է, որ Ֆրանսիայի, Անգլիայի և Աւստրիայի ծանուցագրերը խրկվել են յունիսի 5ին Ս. Պետերբուրգ: Այս լրագրի գրածներից երևում է, որ բոլոր երեք տէրութեանց ծանուցագրերի ոգին էլ մի և նոյն է, ամենքն էլ մի և նոյն ձևը ունին, ուստի և ցոյց են տալիս, որ երեք մեծ տէրութիւնները բոլորովին համաձայն են միմեանց հետ: Մի անգլիացի պաշտօնական լրագիր իր կողմանէ գրեթէ մի և նոյնն է հաղորդում, որովհետև ինչպէս ասում է նոյն լրագիրը, աւստրիական ծանուցագրի մէջ ոչ մի յիշողութիւն չէ լինում զինադադարման վերայ: Այս տեղեկութիւնների վերայ Անգլիական լրագիրը աւելացնում է, թէ ինքը մեծ յոյս ունի, որ Ռուսաստանը կ'ընդունի իրան եղած առաջարկութիւնները, ապա թէ ոչ կ'բացուի պատերազմ, որի պատճառը ոչ թէ իսկապէս այս առաջարկութիւնները կ'լինեն, այլ այժմեան պարագաների ընթացքը: Սոյն այս կարծիքը հաստատում է և մի այլ Ֆրանսիական լրագիր: Քաղաքագէտ անձանց մէջ տարածված է կարծիքը, թէ պատերազմը կարող է ծագել, որովհետև դեսպանագիտութիւնը աւելի և աւելի առաջ է գնում, իսկ միւս կողմանէ Ռուսաց ազգի հայրենասիրական ոգին ստիպում է իր կառավարութեանը, որ սա ընդդիմանայ Լեհաստանի յեղափոխականների մինչև կատարեալ ճնշումն: Իրաւ է, որ արևմտքումը ամենքն էլ մի և նոյն կարծիքի տէր չեն, բայց նոքա էլ, որոնք չեն կամենում գուշակել պատերազմ, ուշացնում են միայն նորա ժամանակը, հաստատելով, որ սա առաջիկայ գարունից առաջ չէ կարող սկսվել: Յայտնի է, որ այս կարծիքը Ռուսների մէջ էլ սկսում է տիրապետել: Այս կարծիքի կուսակիցները, հիմնվելով նորա վերայ, թէ Ռուսաց կառավարութիւնը կ'աշխատէ ձգձգելու բանակցութիւնները մինչև այն ժամանակ, երբ պատերազմական գործողութիւնները սկսել անհնարին կ'լինի, կարծում են առ հասարակ, որ պատերազմը անխուսելի է, որովհետև մի կողմից արևմտեան տէրութիւնները շատ մեծ գործքի են ձեռք առել, այն է, կարգի դնել Լեհաստանի պարագաները և միւս կողմից կարծիք կայ, որ մի քանի կառավարութիւններ ցանկանում են անշուշտ Ռուսաստանին մեծ հարուած կամ գոնէ պատճառել նրան մի նշանաւոր վնաս:

—«Morning Post» լրագիրը հաղորդում է, որ շատ կարճ միջոցում կ'կայանայ Լոնդոնում ժողով տասն տէրութիւնների ներկայացուցիչներից հաստատելու համար նոյն արձանագրութիւնները, որոնք մօտ ժամանակումս ստորագրվեցան, Յոնիական կղզիները Յունաց թագաւորութեան հետ միացնելու գլխաւորութեամբ:

—Դուքս Ռոտլանդը, Լորդերի ժողովում Լեհաստանի հարցի վերայ խօսելիս, աշխատում է ապացուցանել, որ գործը պէտք է աւելի թողնել իրան Ալէքսանդր կայսեր, որնոր, ապստամբութիւնը բոլորովին ջնջելից յետոյ, այն բարեկարգութիւնները կանէ այնտեղ, որոնք կատարելապէս կ'հանգստացնեն Լեհաստանը: Սա կամենալով նկարագրել Լեհերի այժմեան վիճակը կարդում է «Times» լրագրի հետևեալ գրուածը: «Մի ռուս գեներալ կանչում է իր մօտ մի Լեհ կալուածատիրոջ, որին ճանաչել էին, իբրև թէ նա յեղափոխականներին օգնութիւն է տալիս, և հրապարակաւ յայտնում է նրան, որ նա հեռու պահէ իրան այնպիսի գործողութիւններից: Այս կալուածատէրը յայտնում է իր դրութիւնը այսպէս. «Եթէ յեղափոխականները գալիս են իմ մօտ, ասում նա, նոքա պահանջում են ինձանից ձիեր, կառքեր և հաց — և ես ստիպուած եմ տալու նոցա պահանջածը, ապա թէ ոչ, իրանք կ'առնուն և ինձ էլ կը կախեն: Միւս կողմից եթէ տալիս եմ նրանց իրանց պահանջածը, դուք էք ինձ սպառնում կախաղանով: Բայց էս էլ կայ, որ եթէ նոքա կախեն ինձ, իմ որդիս էլ չի գտնել իրան կին Լեհաստանում և ոչ էլ աղջիկս մարդ կարող է ճարել իր համար և իմ մահից 50 տարի յետոյ ամէնքը երես կ'դարձնեն իմ զաւակներիցս և ոչոք չէ կամենալ նոցա հետ կապակցութիւն ունենալ. այն ինչ նոքա արձան կ'կանգնեն ինձ, եթէ դուք հանէք ինձ կախաղան: Մի խօսքով, ես իմ հաշուովս չեմ կարող բացասել յեղափոխականներին նոցա պահանջածը:»

15ին յունիսի 1863. Եթէ հաւատանք լրերին, Աւստրիայի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները դիտաւորութիւն ունէին այսօր յանձնելու իրանց տէրութիւնների ծանուցագրերը Լեհաստանի խնդրի մասին Ռուսաց տէրութեան ատենադպրին:

— Լորդ Պալմերստոնը յունիսի 10ի ժողովում համառօտաբար մեկնեց վեց հատուածները, որոնք կազմում են ծանուցագրերի բովանդակութիւնը և մենք աւելորդ չենք համարում հաղորդել նրանց մեր ընթերցողներին: Առաջին հատուածի մէջ տէրութիւնները խորհուրդ են տալիս հրատարակել ընդհանուր և կատարեալ ներողութիւն: Երկրորդ հատուածը վերաբերում է ազգային երեսփոխանութեան այն հիմունքների վերայ, որոնք Աղեքսանդր Ա. կայսրը Վիեննայի դաշնագրութեան ակնարկութեամբը հաստատել էր 1815ին: Լորդ Պալմերստոնը ակնարկութիւն էլ արաւ, թէ Աւստրիայի կառավարութիւնը մէկ քիչ այլապէս է մտածում ազգային երեսփոխանութեան վերայ Լեհաստանում, միայն Լոնդոնի արքունիքը կարծում է, որ նա պէտք է հիմնված լինի Աղէքսանդր Պաւլովիչի սահմանադրութեան վերայ: Երրորդ հատուածի հիման վերայ, կառավարչական վարչութիւնը պէտք է բաղկացած լինի միայն Լեհերից և գրաւի ազգի հաւատարմութիւնը: Չորրորդ հատուածը պահանջում է խղճմտանքի կատարեալ ազատութիւն և ազգի կրօնին հովանաւորութիւն: Հինգերորդ հատուածը պահանջում է, որ Լեհերի լեզուն գործածվի թէ վարչութեան և թէ դատաստանութեան մէջ: Վերջապէս վեցերորդ հատուածումը առաջարկվում է կարգել կանոնաւոր եղանակ զինուորագրութեան: Լորդ Պալմերստոնը աւելցրեց, որ Անգլիայի կառավարութիւնը բացի սրանից կարևոր է համարում պատերազմական գործողութեանց դադարումն: Առաջին նախարարի կարծիքով կառավարութիւնը բոլոր ջանքը 'ի գործ դրեց, որ յաջողի բոլոր նորա ցանկացածը: Այս էլ գիտենալու է, որ Պ. Դիզրայէլի, որ պաշտպան կուսակցութեան առաջնորդն է հասարակաց ժողովում, արժան համարեց հաւանութիւն չտալու արքունիքի քաղաքականութեանը: Նորա կարծիքով սա բաւարարիչ չէ, որովհետև, եթէ Ռուսաստանը համաձայնելու էլ լինի իրան եղած առաջարկութիւններին, կ'վերականգնի, ոչ թէ Լեհաստանը, այլ միայն նորա խօլական պատկերը, որ նոր կ'պատճառէ նոր և աւելի մեծ թշուառութիւններ:

ԱԶԳԱՅԻՆ

Թէ Մեղուն և թէ Կռունկ լրագիրը քանիցս անգամ պատիւ ունեցան հրատարակելու իրանց թերթերի մէջ Զէյթունի Հայերի վերայ զանազան տեղեկութիւններ և մանաւանդ Զէյթունի վերջին անցքի վերայ անցեալ տարի, որ նոր նոր փառքով զարդարեց այն լեռնաբնակ Հայերի զէնքը: Թէև յաղթող մնացին նոքա Տաճիկների բազմաթիւ զօրքերի դէմ, միայն իրանք էլ բաւական զգալի վնասներ քաշեցին, թէ մարդոց կողմանէ և թէ Տաճիկների յափշտակութեամբը, որոնք կողոպտեցին եկեղեցիները և այրեցին մինչև հազար տուն Զէյթունի երկրի գիւղերումը: Մենք մեր դրութիւններում աշխատել էինք յորդորելու տեղւոյս հայ եղբայրներուն, որ ցոյց տան իրանց մարդկային սրտի զգացմունքը և եղբայրական գութը դէպի իրանց վշտացած արենակիցները, նուիրելով յօգուտ այն թշուառ, բայց ազնիւ Հայ հասարակութեանը իրանց աւելորդից, որքան ամէն մարդ կարող է: Միայն ցաւելով, պէտք է, ասենք, որ մինչև ցայժմ շատ քիչերի մէջ տեսանք, թէ զգացմունքի և թէ հասկացողութեան արտայայտութիւն: Գուցէ մենք սխալում ենք, գուցէ երկուան էլ շատ են մերոնց մէջ միայն այլ և այլ հանգամանքներ մինչև ցայժմ արգելք են եղել նոցա արտայայտութեանը և յուսալի է, որ նոքա մեծ ձևով այժմ երևին: Երանի այս այսպէս լինէր և մեր կարծիքը սխալ դուրս գար բոլորովին, որ մենք շտապած երևէինք այդ բանի մէջ մի գաղափար ստեղծելում մերոնց վերայ: Ահա այժմ ամէն բան թեթևացած է, ամէն մարդ կարող է հաւաստի լինել որ իր նուէրը ուղղակի կ'հասնի իր տեղը և 'ի գործ կ'դնվի իր նշանակութեան յարմար, որովհետեւ եկել է այստեղ այդ գործքի համար բուն Զէյթուն քաղաքից պատուելի Տէր Մարքար անունով քահանան, որոր ունի վկայութիւն էլ իրանց կանոնաւոր և հարկաւոր, ուրեմն և կասկած չէ կարող լինել որ ամէն ջերմեռանդ նուէր Զէյթունցիների համար կարող է հասնել իր տեղը: Մենք մեր կողմից այս անգամ այսքանը կ'ասենք մեր հայ եղբայրներին, որ ամէն մարդ մտածէ, որ տալն է իր նուէրը իր ամենից ընտիր և արժանաւոր եղբայրների համար, նոցա համար, որոնք իրանց ազգային և մարդկային իրաւանց պահպանութեան համար արիւն թափելու պատիւը ունեցան: Տո՛ւր և առցի քեզ:

Մարաշէն մայիս 7 թուականով նոյն տեղւոյ առաջնորդ եպիսկոպոսին ստորագրութեամբ և ուրիշ քըսան ու մէկ տեղական ականաւոր անձանց զմուռներով մի նամակ է հասած կ. Պոլիս Հայոց Պատրիարքարանը: Սոյն նամակը իմ ձեռքս անցաւ, կարդացի և ահա նորա պարունակութեան մէկ համառօտ քաղուածը ձեզ կը ներկայացնեմ'ի գիտութիւն մեր Թիֆլիզու ազգայնոցս:

«Ուլնու (Զէյթունի) հաչակաւոր և քաջ իշխանորդի Ենի-Տիւնիա Շիլ-Բանոս անուն անձը, որ այժմ կ. Պոլիս գտնուող Ենի-Տիւնիա Աստուածատուր իշխանին եղբայրն է, եօթն ամիսէ'ի վեր Մարաշու մէջ բանտարկուած կ'մնար, Մարաշու այժմու կառավարիչ Աշիր փաշայի հրամանաւ: Այս բանտարկութեան պատճառ Ուլնու վերջին անցքերն եղած են անշուշտ, որովհետեւ, ինչպէս գիտէք, Աշիր փաշան այս անձը յատկապէս խնդրած էր, որ դատաստանին ներքև դնէ ուրիշ Մարաշցի հինգ-վեց Հայերուն հետ միատեղ, որոնք մինչև ցարդ կ'մնային մի և նոյն բանտի մէջ, թէև դատաստաննին տեսնուած է և ոչինչ դատապարտութեան արժանի յանցանք մը ստուգուած է անոնց վրայ: Բաւական ժամանակէ 'ի վեր Ենիտիւնեան այդ բանտին վատառողջ և նեխած օդէն վտանգուելով հիւանդացած էր: Մարաշու ականաւոր անձինքը և նոյն իսկ առաջնորդը քանիցս անգամ կը խնդրեն փաշայէն, որ Ենիտիւնեանը առժամանակեայ կերպիւ արձակէ յատուկ երաշխաւորութեամբ, որպէս զի փոքր ինչ նորա առողջութեանը դարման տանեն: Յիշեալ անձանց անդադար թախանձանաց փաշան բոլորովին խուլ և անզգայ կենալով ամենեւին թոյլ չէ տուած, որ բանտէն ուրիշ աղէկ տեղ մի փոխադրուի այս անձը: Վերջապէս խեղճ մարդը վերջին աստիճան տագնապելով և իւր վերայ տիրած անբուժելի տարօրինակ հիւանդութեանց չի դիմանալով մայիսի 7ին իւր վերջին շունչը կը փչէ. թողնելով 'ի տրտմութեան բոլոր համազգայնոց և Ուլնու ժողովրդեան:

Մեռած օրը փաշան իսկոյն հրաման կ'ընէ առաջնորդին, որ գայ Ենիտիւնեանի դիակը վերցնել տայ, նա ալ պատասխան կուտայ, թէ «ըստ որում անոր ողջ ատենը մեր խնդիրքը մերժեցիք և այդ կերպով դուք եղաք պատճառ նորա մահուանը, ուստի մենք ոչ կը վերցնենք անոր դիակը և ոչ պատասխանատու ենք նորան համար, զոր դուք սպանեցիք ձեր յամառ անգթութեամբը: Փաշան զայրանալով Ահմէտ փաշային քով կ'երթայ և երկուքնին մէկ խօսք ընելով առաջնորդարանէն երեք հոգի իրենց կը կոչեն և անոնց կըսեն, թէ անմիջապէս դիակը պիտի վերցնեն, եթէ ոչ, բեռնակիր կանչելով մինչև եկեղեցւոյ դուռը բերել և ձգել կուտայ, վասն զի, թէ որ իրենց խօսքին անսալու ըլլայ, (կը յաւելու փաշան) այսինքն թէ՝ թէ որ արդարութեան և օրինաց համեմատ չարժի, ռամիկները պիտի ըսեն, թէ մենք Ուլնեցւոց պաշտպանութիւն կընենք և նորէն խռովութիւն կելլէ; Վերջապէս Մարաշցիք կը տեսնեն, որ փաշային միտքը գէշ է, կամայ ակամայ դիակը կը վերցնեն և քանի Ուլնեցի քաջերու հետ Զէյթուն կը ղրկեն մարմինը: Հոս է ամենակարեւոր դիտողութեան արժանի կէտը, որ յիշեալին մարմինը Զէյթուն տարուած ատենը ճամբան մեռելոյն բերնէն արիւն կուգայ և հոն լուանալու ատեն կը տեսնեն, որ խեղճին մազերն և ընչացքը թափած են և եղունգները սեւցեր են, այս նշաններէն այնպէս կ'երեւի, որ անշուշտ խեղճ մարդը թունաւորուած է եղեր Աշիր փաշայի վատ հրամանովը և կը վախցուի, որ միւս բանտարկեալներն նորին վիճակը ունենան, վասն զի նոքա ևս ծանր հիւանդ են և փաշան երբէք թոյլ չի տար անոնց դուրս ելլելու, որ ապահովութիւններ տրուին. վասն զի քէն ու վրէժով լցուած է նա մեր Ազգի դէմ: Ահա այս է նամակի պարունակութիւնը: Պատրիարքարանի և այս տեղ գտնուող Զէյթունցի Աստուածատուր և Ղազար Շորվայեան երկու իշխանաց կողմանէ, թէ դրան և թէ ուրիշ կարեւոր միջոցներով կ'աշխատուի իրաւունք ձեռք բերելու, թէ այն անձինքը այն բանտէն ազատելու համար և թէ այն փաշային պատիժը կամ վրէժը հատուցանելու համար. յոյս կայ:

Պոլսոյ «Մեղու» հանդէսի 202 համարումը կարդացինք այս տարուայ մայիսի 29ին Պոլսում կատարած ազգային Սահմանադրութեան տարեդարձի հանդէսի նկարագրութիւնը: Ահա շտապում ենք այդ ուրախալի համբաւներին մասնակից անել և մեր Ռուսիական պատուելի հայերին:

«Մայիսի 26. կիրակի առաւօտը Պոլսոյ ամէն թաղերի նաւամատոյցներում շոգենաւերը պատրաստ լինելով (Տնօրէն ժողովի մի քանի օր առաջ արած կարգողութիւնը) ամէն Սահմանասէր անձինք նստեցան և երեկոյի հանգիստով անց կացան Պէյքօզի նաւամատոյցը: Այստեղից էլ Հայ բազմութիւնը խումբ խումբ ժողովուած ուրախ և զուարթ գնացին դէպի եկեղեցին, ուստեղ որ արժանապատիւ Ներսէս եպիսկոպոսը պէտք է պատարագ մատուցանէր այսօր, բայց հանդիսականների ժողովուելու պատճառով քիչ ուշ ըսկսեցին ժամերգութիւնը: Այս թաղի եկեղեցին, թէ և ինչքան մեծ էր, բայց այնու ամենայնիւ այսօրուայ հաւաքուած ահագին բազմութեանը տեղ չէր կարող լինել, որովհետև այսօր այստեղ Սահմանադրութեան տօնողները մինչև տասը հազար էին: Եկեղեցւոյ փոքրկութեան պատճառով դուրս առաջ եղած լայնածիր փողոցը շատ վայելուչ կերպով զարդարել էին: Փողոցի բերանում մեծ և հոյակապ կամար էին շինել և վրան գրած էր «ԿԵՑՑԷ ՍՈՒԼԹԱՆ ԱԲՏԻՒԼ ԱԶԻԶ» և կամարից մինչև եկեղեցւոյ առջևի բարձրաբերձ ծառերի մօտը փողոցի երկու կողմն էլ, կանաչեղէն զարնեայ կամարներ էին շինած և ամբողջ քուչէն ու հրապարակն էլ ցանած էր խոտով ու ծաղիկներով: Բազմութիւնը այս հոյակապ կամարի տակովը անց կենալով, առաջ էր գնում դէպի այն բարձրաբերձ ծառերը, ուր Ներսէս եպիսկոպոսը ծանր զգեստներով զգեստաւորուած գրեթէ մէկ ժամու չափ ազդու և ազգօգուտ քարոզ տուեց: Ներսէս եպիսկոպոսի տեղը լաւ զարդարած էր ու վերեն էլ ծաղիկներով գրած էր «ԿԵՑՑԷ ԱԶԳ ԵՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ»:

Այս զմայլելի և ուրախառիթ տեսարանները և այն տեղ ներկայ գտնուող բոլոր Հայոց դէմքերի վերայ եղած ժպիտը, այս բոլորը ցոյց էին տալիս ամէնքին, որ Հայ սիրտն էլ սահմանադրական փափագ ունի: Ժամերգութեան աւարտելուց յետոյ Պատրիարքական փոխանորդ արժ. Գէորգ վարդապետը և ամէն եկեղեցեաց քարոզիչ վարդապետները և մէկ քանի քահանաներ հանդիսականաց բազմութեան հետ ընկերացած, առաջներումն էլ նուագարանները և նուագածուաց խումբը ազգային երգեր նուագելով. կանգնած էին. բազմութեան մէջ տեղն էլ Պոլսոյ երևելեաց աղջիկները (Հայուհիք) միաձև և սպիտակափայլ շորեր հագած, գլխներին էլ ծաղկեայ սպիտակ պսակներ դրած, զոյգ զոյգ թևթևի տուած ազգային երգեր էին երգում նուագարանների հետ միասին: Այս բոլոր բազմութիւնը միասին հասաւ մինչև «Հիւնքար իսկէլէսի» անուանեալ ծառերով զարդարուած զբօսավայրը, ուր որ հոյակապ և գեղեցկաշէն կամար էր շինած, այս կամարի տակից անց կենալով, ամենքեան գնացին իրանց համար պատրաստուած տեղերը նստան: Պատրիարքական փոխանորդի և հոգևորականաց համար էլ մի առանձին շքեղ վրան էր պատրաստուած, ուր և բազմեցան նոքա: Մեծ ուրախութիւնն այն էր, որ այսօր պատահմամբ այս գեղեցիկ դաշտումը Պոլսում եղած իտալացիք էլ տօնում էին իրանց ազգային սահմանադրութեան երրորդ տարեդարձը:

Ահա այսպէս այս օրը մի և նոյն կանաչազեղ դաշտի վերայ երկու միմեանց, թէև անծանօթ, մարդիկներ (Հայք և Իտալացիք) նմանօրինակ տարեդարձի հանդէսը կատարեցին: Նոյն օրը երկու տարբեր գրօշակներ ծածանւում էին ՚ի նշան ուրախութեան ..... Այստեղ Հայկեան թոռները զոյգեա միասին և միահաղի ցընծութեան և ուրախութեան աղաղակներով օդը թընդացնում էին: Այստեղ կիրքն ու ատելութիւնը, բռնութիւնը ու թշնամանքը Հայկեան թոռների սրտից հեռացած էին և այստեղ տեսնվում էր, որ հայք միմեանց ճանաչում են և միմեանց սիրում: Այս զբօսավայրին մէկ կողմը Տնօրէն ժողովի հոգատարութեամբ 300 հոգւոյ համար միասին ճաշելու բաւականին վայելուչ կերպով երկար սեղաններ պատրաստած էին: Կարող ենք ասել, որ այսպիսի բացօթեայ տեղում սեղանների պատրաստութիւնը և վերջապէս կերակուրները չափիցը դուրս լաւ էին և վայելուչ. մի քանի աննշան թերութիւններն էլ այնպիսի տեղում անպատճառ կարող էին գտնուիլ: Ինչ և իցէ այսպիսի ծանր աշխատութեանց համար պարտաւոր ենք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Տնօրէն ժողովի արգոյ անդամներին: Այս սեղանները չորս անգամ դատարկուեցան և նորից լցուեցան տոմսակաւոր հրաւիրեալներով:

Ճաշից յետոյ Հայկեան թոռները խումբ խումբ գրօշակներն ու նուագածուաց խումբն իրանց առջևը դցած սկսան Ազգային սրտառուչ երգեր երգելով այն դաշտի վերայ ճեմել և երբեմն ԿԵՑՑԷների աղաղակներով օդը թնդացնել:

Այս միջոցում Իտալիոյ փոխ. դեսպան Պէլլա Գաբրուչիոլա Մարկիզը պատուաւոր իտալացւոց հետ իտալական դրօշակով Հայոց հաճեցաւ այցելութիւն անելու Հայոց շքեղ վրանում. ուր որ մեր հայերից սիրալիր ընդունելութիւն գտաւ. նա ևս իր սրտի գոհունակութիւնը յայտնեց և քիչ խօսելուց յետոյ գընաց իր վրանը: Յետոյ Ներսէս եպիսկոպոսը Հայ և Հռոմէական կղերիկոսների հետ ՚ի պատիւ Իտալական հանդիսին այցելութիւն արաւ Իտալացւոց դեսպանին:

Շատ սիրելի էր մեզի տեսնել այնտեղ Անձնանուէր ընկերութեան անդամ եղող Ասիացի պանդուխտ Հայոց ներկայացրած սիրալիր տեսարանը: Սոքա բոլորքեան միայն իրանց ազգային երգեր երգելէն յետոյ, մէկ մանաւոր տեղ ժողովուելով. իրանց մէջ մի քանի համառօտ, բայց սրտաշարժ, ճառեր կարդացին Հայաստանի Թշուառ վիճակի վերայ:

Սրանից յետոյ մեծարգոյ Օգսէն Էֆէնդին, մանաւոր կերպով շինուած ամբիոնի վրայ բարձրանալով, համառօտ, բայց ազդու ճառ խօսեցաւ, որ բուռն ծափահարութեամբ ընդունուեցաւ ունկնդիրներից: Յետոյ Միլպուրեան Արգոյ Պ. Ներսէսը ճառ կարդաց և յետոյ արգոյ Պ. Ճէվահիրճեանը ճառ խօսեցաւ: Արդէն օրը մթնանում էր, որ հանդիսականները խումբ խումբ շոգենաւերը մտնելով ազգային երգեր երգելով վերադարձան իրանց Թաղերը: Այն գիշերը իւրաքանչիւր Թաղի մէջ մասնաւոր հանդէսներ եղան աւելի նուանդուն կերպով, որ գրեթէ մինչև կէս գիշերի մօտ շարունակուեց ազգային երգերով և ճառեր կարդացուելով:

'Ի վերջոյ չը մոռանանք մեր սրտի խորին շնորհակալութիւնը հրապարակաւ մատուցանելու երաժշտութեան դասատու Արգոյ Պ. Նիկողոս Թաշճեանին, որ տարեդարձի երգերի Թէ ձայնագիրը պատրաստելու, և Թէ դասատուութեան ծանր աշխատութեանը յանձնառու եղաւ, մանաւորապէս գիշեր և ցերեկ մէկ Թաղից միւսը երթևեկելով:

Ահա այս կերպով այս սրտաշարժ հանդէսը առանց վէճի և կռուոյ վերջացաւ 'ի պատիւ Հայկեան սերնդոց. այսուհետև կ'մնայ Սահմանադրութեան գործադրութեանը նայել:»

Սրանով վերջացնում է այդ հանդիսի նկարագրութիւնը Մեղուի մէջ: Այդ յօդուածի հեղինակը շատ ուրախ է, որ բանը առանց կռուի է վերջացել, իբրև Թէ ամէն հայոց ազգային գործն էլ առանց կռուի և վէճերի չպէտք է անց կենայ:

Մասնաւոր նամակներից իմացանք, որ մի և նոյն մայիսի 26 ին Սահմանադրութեան տարեդարձի տօնը կատարել են մեծ հանդէսներով Տաճկաստանի ամէն մեծ քաղաքներում: Մանաւանդ Տրապիզոնում կատարած հանդէսը շատ շքեղ է եղել:

Մեր Տաճկաբնակ Հայոց այս կերպ յառաջադիմութիւնը քաղաքականութեան մէջ անշուշտ բարի ներգործութիւն պէտք է ունենայ և բոլոր Հայոց վերայ:

Բանն այն է, որ Տաճկաց իշխանութեան ներքոյ եղած Հայք ամէն կերպ յառաջ են, քան Թէ մեր այս Կովկասաբնակ Հայքը, որ քայլում ենք այժմեան Ռուսաց կայսեր ազատ հովանաւորութեան տակ: Տէր Աստուած, որ այդ օրինակը բարի ներգործութիւն ունենար և մեզ վերայ......

Ա. Ե.

◆

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱԴԵՐ

Մի գեղջի մարդ, ճիպոտը ձեռին, քշում էր բադերին դէպի քաղաք ծախելու և նրանց հետը, Թէ դրուստը կ'ուզես, նա լաւ չէր վարվում. շտապում էր նա, որ փողոց հասնի ու աւելի դատում վեր առնի (որ տեղ դատումն բանը կընընկնի, ոչ Թէ բադերին, մարդուն էլ կու հասնի): Ես գեղջուն չեմ մեղադրում, բայց բադերը ուրիշ Թահար էին խօսում ու ճանապարհին պատահած մէկին, էսպէս էին ասում. «Կընի եարաբ մեզանից աւելի քամբախտ ազգ, էս գեղջին մեզ հետ խիստ փիս է վարվում և մեզ ինչպէս հասարակ բադեր է քշում, չի հասկանում յիմարը, Թէ մեզ պատիւ պէտք է տայ, Թէ մեր պապերը էն բադերն էին, որ Հռոմը(*) ազատեցին դուշմանների ձեռքից, նրանց էնտեղ միշտ պատվում էին, նրանց տօնը կատարում էին:»

—«Դուք ի՞նչ պատիւ էք պահանջում,» անցկեցողը հարցնում է:

—«Մե՛ր պապերը.........»

—«Էդ գիտեմ, կարդացել եմ, բայց ուզում եմ իմանալ, դուք ինչ օգուտ էք բերել:»

—«Մեր պապերը ազատել են Հռոմը:»

—«Էդ էդպէս է, դուք ի՞նչ մեծ բան էք արել»:

—«Մե՞նք, մենք ոչինչ»:

—«Բաս էլ ի՞նչ էք դուք մեծ մեծ խօսում, էլ ինչի՞ էք դուք պիտանի, Թողէք հանգիստ ձեր պապերուն նրանք պատուի են արժանի, բայց դուք մենակ խորովածի պէտքը կուգաք:»

Էս առակի միտքը կարելի էր պարզ անել, բայց չենք ուզում մեր բադերին ջնկրտցնել:

Թարգմանութիւն Կրիլովից

(*)389 տարի Քրիստոսի Ծննդից առաջ Գալլիացիները պաշարեցին Հռոմի Կապիտոլիոն միջնաբերդը: Մի մութը և անձրևային գիշեր, բերդապահերը ամենևին կասկած չտանելով Թշնամու յարձակմանը վերայ, եղանակի վատութեան պատճառով, անզգոյշ եղան բերդը պահպանելու մէջ: Գալլիացիները պատեհ ժամ համարելով այն գիշերը, բարձրացան բերդի պատի վերայ, միայն այն տեղ գտնուող սագերը (բադերը) իրանց ըղղաւելովը զարթեցրին պահապաններուն և այսպէս պատճառ դարձան բերդի ազատվելուն: Այս պատճառով Հռովմս մը տարուց տարի միշտ տօն էր կատարվում:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ:

ԵՐԵՔ ՄԵԾ ԱՔԼՈՐ

Մինն Թիֆլիզեցի, մինը Ղարաբաղցի և միւսն Օսմանցի,
Միմեանց ռաստ եկան, խօշուբէշ արին,
Թէ գնանք լորիդ ի քաղաքն Կարին:
Բեռն կապեցին, ճամփայ գցեցին,
Իրանք ալ ելան յետ գնացին:
Արաքն անց կացան ղրային վերեկան,
Որ քիչ ղինջանան, ելնան ու երթան,
Թիֆլիզցին ասաւ չէնի ջիրիմէ,
Էս վուրդի եկանք, ջանս դողումէ,
Աստուած կուսիրէք, մին չարայ տեսէք,
Վերկենանք գնանք էստեղ շատ ահէ:
Շուշվայ դոլեցին բեխըն սրեց,
Բերանը բաց արաւ ղալմաղալ արեց,
«Հինչպէս մարդ ես, դու շան տղուտղայ,
Հեչ մի վախենայ յոլ կարայ մօտ գայ:
Օսմանցին ասաւ ինչ կըսեսկը ծօ,
Խենդութիւնլար ես, շաշխուն հէրիֆ դու,
Դէ հայ դէ հայ ասանկ տեղ չըլլանք,
Աստեղէն ելլանք գեղի մէջ իջնանք.
«Զօյ Աստոյ եկ տղոցը ձէն տուր,
«Զօյ Ագոյ ձիուս գեմը տուր,
«Զօյ Անդօն, եկ քիսաս ա պահէ,
«Թիֆլիզցին կասէ աստեղ շատ ահ է:
Թիֆլիզցին ասաւ, վայ մէ գեթաղվայ,
Բաս ի՞նչ անեմ, մեռնումեմ աղայ,
Երեսիս մտիկ թէ ինչ հանդի է,
Թէ վուր է գուղ գայ, ինձ էլ բան կանէ,
Ա՛խ իմ Բարբարէս, թէ կու իմանայ,
Առանց ղաղիփայ վէր կենայ դուքայ,
Նարաթ իմ կատօն հիմի վուրդի է,
Կուլի վուր դուքնումըն գինի կու խմէ:
Շուշվայղալեցին ասաւ Թիֆլիզցուն,
Դէ հա՛, դէ հա՛ միկիտնի շուն,
Հէդ ինչպէս խապար, հէդ ինչպէս բանա,
Կասես քի կատուն գինի կու խմայ:
Օսմանցին ասաւ, ծօյ ձէնդ կտրէ
Անոնց քաղաքը գինին աժան է,
Անոնց կատուն ալ այնպէս կատու է,
Որ երկուս չը թապլած մէկ մուկ չի բռնէ
Դէ, եկէք, եկէք արէք նստեցէք
Եմէք ալ չկայ ցամաք հաց կերէք:
Եկան մօտ եղան, կարգաւ նստեցան
Սուփրան բաց արին, օրհնեցին, կերան:
Կանչեց մեծ աքլորն ա՛խ խղճալէ
Ա՛խ ղմերթօջան, ի՞նչ է իմ հալը
Ա՛խ մէ պտտի դօշ և պտտի զուրգէլ,
Գինին էլ կուլէր խիստ լաւ կուլ կնհէր:
Օսմանցին ասաւ, հելէ աղամ,
Անիծեմ քո դօշն ու խղլալէն,
Թէ որ կերակուր գովելու ըլլամ,
Ես քեզի ասեմ եմէք պատուական
Ջրխաշու խաշիլ կարծեմ չես կերած.
Ձիգերով դժվժիկ, կորկոտով ապուր.
Բաղկով բօրանի, անմահ կերակուր:
Շուշվայ ղալեցին անկարծ վեր թռաւ,
Ասած խօսքերը գլուխը տարաւ,
Գնաց խուրջինէն գինուն տիկը հանեց,
Բերաւ մոտերը, կրկին նստեցաւ,
Խորը գաւաթը որ շարունակ խմեց,
Իր լեղքն ու հոգին իսկոյն աւանդեց.
Բայց երբ կնիկը ու տղան միտն ընկան
Ախուվախ անելով այս խաղը ասաւ,
«Ես կերթայի պապոնց տուն
Պապոն կասէր, քոփակ շուն,
Զարդախի դուռն բաց էր
Բարձ ու բալիշ դրած էր,
Մատաղս մէջ քնած էր
Գիքոս ծոցին քնած էր
Գիքոս կասէր ծիծիկ տուր,
Մատաղս կասէր գաթար տուր:
Իսկ մեծ աքլորն գինին որ չտեսաւ,
Կիկլիկան կանչեց շատ ուրախացաւ.
Օհ պարուն աղայ, թէ վուր ախպեր իս,
Էտուրից ինձ թամաշայ կանիս:
Աչքերն թացին սաստիկ շշմեցած
Ասեն ինչ անենք մեզ քոմակ կանչենք,
Հարայ հուրայ տանք, Աստուած աղաչենք
Աստեղան եղաւ որ մէջ գեղերին
Աքլորն կը կանչէ կլէկը ղայդէն:

ԶԲՕՍԱՐԱՆ

Քախկի երեխերանց ու ջհել տղեանց քէփ անիլը. Սամբոլու Սահմանադրութէնի համա ուրախութին անիլը. համքըրներու ճաշադը:

Միր քախկումը սովորութին կայ, վուր Զատկի էգնէն գիփունանքը՝ թէ մինձ թէ պստիկ քէփ կանին. ի հարկէ ամէն մարթ իրան զօրայ:

Հիմի տեհնինք, թէ ի՞նչին անում նրանք. վուր ասումին «քու արիւը գիդէնայ՝ էս օր մի սիրուն քէփ ինք արի, վուր թաքաւուրի լաիղ: Սըցինք պըստըկներեմէն:

Օրինակ՝ մօտ կուլին 6-7 մանդր տղէրք 8-9 տարեկան, մէկս մէկու կօսին, «Արի, էքուց հարու փանայ անինք: Լաւ, ամա վո՞ւրդի ուտինք հացը:»

Մէկը կսէ «միր կտրը:»

Մէկէլը, թէ «միր կտրը լաւն է, բայրը տիղ է:

Մէկէլը. թէ «չէ, վո՞ւնց ձիր կտրը, փունդ սրանց. թէ լաւն ուզում իք, գնանք տարիք մօրուն՝ էն կանանչ խոտումը կարմիր ձուն գլոր իլի ու հաց ուտինք, ինչ ասիս, աժէ:»

Դիփունանքն ասին, թէ «կանանչ խոտումը քէֆ անիլը լաւ է, տափը գնանք:»

Մէկէլ էքսը սրանք իրանց տանեմէն տանում ին ինչոր ունին:

Սրանցմէ մէկը իրա դէդին ասում է «դէդի-ջան, էս օր հարուփանայ պխտինք ամէնմէ քիչ հաց ու պանիր տամ:»

Դէդէն ասում է, թէ լաւ կուլի վուրթի, ամա առաջ ասա տեհնիմ թէ ո՞ւմ հիտ իս գնում հաց ուտելու:

«Ա՛յ էն քոշկարողինց տղէն է, Միկիտոնինց տղէն է, Յոնինց տղէն է, մէ քանի էլի ուրիշ օղքնիք:»

—Լա՛ւ, վուրթի, նրանք խելօք տղէքք ին, նրանց հիդը գնա, ամա ցիլքութին չանիք, մէկմէկու չծեծիք: Մուղայիթ կաց, արեգակը գլխիտ չխփէ:»

Տալիս է վուրթուն հաց, պանիր, խիղիլալի, դոշի կտոր ու երկու կարմիր ձու:

Վուրթին տեհնում է, վուր դէդէն գինի չէ տալի, ասում է «դէդի, մէ քիչ գինի էլ տա՛ս:»

Դէդէն ջուղաբ է տալի թէ «գինի չես ուզի, վուրթի. վա՛յ թէ հարբիս ու մէ խաթանի ւասա գայ, իժում:

Տղէն լաց ըլելով ասում է «դիփունանքը կու բերին ու մաշ մենակ իս չտանիմ. ամօթ էլ է, ո՛ւ կօսին տանը գինի չունին:»

—Լա՛ւ, գինի էլ կու տամ, ամա մտիկ արա, խելօք կաց, թէ չէ, մէ բան վուր դուս գայ էտ գինեմէն մէ շարաթ վո՛ւնց գինի կու խմեցնիմ ու վունց տաք կերակուր կուտեցնիմ:

Դէդէն մէ պստի շուշումը երկու ստաքան գինի է ածում ու տալիս է վուրթուն:

Մէկէլը ասում է իրա դէդին «դէդի՛ջան, էս օր հարուփանայ պխտինք անիմ:

—Լաւ կոնիք վուրթի, միր տունը Աստու բարութենով լիքն է, ինչ որ գուզիս, ինչ դդմայ գուզիս, դիփ տար:

Քոռն ի՞նչ գուզէ, ջուխտ աչկով լուս: Արա՛ էրեխայ ասա ու իրա ընկերոտներանցը մօդ իմքնիր պխտի տանի: 'ի հարկէ կու աշխատէ վուր ամէն բանեմէն մէկը մէկէլ վի կոլոն. գինին խոմ մէ բոթլի լիքը տարաւ:

Սրա դէդին վուր հարցնիս, թէ ինչի՞ իս էտէնց վիր թողած վուրթի մինձայնում: կօսէ «ի՞հ մա՛շ ինչ անիմ քա՛, դէդի մէկ ու ճարի ու թո՞ղ սիրտը վունց մինձանայ, կինայ վաղը (մատաղ ըլիմ) իմ դէնուքին:

Իժումէգի դամը խփոր մինձանումէ էս քու սիրտը վունց գէօւրքը, իրա դէդի ծիծն ու պտուկն է ուշունց տալի:

Էհ մախլաս: Վուրն էհէնց, վուրն էնէնց՝ դիփունանքը իմքնիք ին տանում իրանց ունեցածմէն: Էրկու խելադայ էլ ջուր ին տանում: գնում ին տափը: Մէ լաւ կանանչ տիղ ին ջոդում. նստում ին. Ամէն օմքին իրա տոլունը բաց է անումու իրա առաջը փռռում է: Առաջ ձու ին խփում: Էս էքէխերանց մէջը խանդլխան կուլի է դուս գալի. մէկը մէկու ուշունց ին տալի. շատ վախտ ծեծվում էլ: Սուփրի վրէն ուրիշ անկարգ բանիք էլ ին անում: Էս էնդումէն է, վուր սրանց մէջը մէ մինձ օմքին չկայ, վուր սրանցը ան խրատէ, ան դաշողմիշմիշ անէ:

Մէքիչ հաց ին ուտում: Մէկը վուր տխտոնիկ է, էնդրանց բղաւում է «Աստ գինու վախտ է:» Դիփունանքը ածում ին գինին: Մէկն ասում է «առաջ ո՞ւմ կինացը խմինք:

Մէկը, թէ «առաջ թաքաւուրինը:

Մէկէլը թէ «առաջ միր կաթալիկոսինը:»

Վրայ իրեքը, թէ «չէ. վունց նրանն ու վունց սրանը. հաղեր առաջ Աստու կինայը խմինք. նա համ մինձ է, համ դիփունեմէն բարին է: իմ մամէն ասում է, վուր դիփունանցս նա է ստիղծ ի:

Դիփունանքն ասում ին, թէ «մաշ առաջ Աստու կինայը խմինք: «Աստուծ կինք տայ Աստուն» մէ մէկ ասում ին ու գինին խմում ին: Իժում թաքաւուրի կինացն ին խմում: Իժում կաթողիկոսինը, վէրջը կի իրանց կինացն ին խմում:

Հաց ուտելու էդնէն բուրթով տոլ տալու ին խաղում. ան չիլիկաղ ջոխի ին խաղում: Մթանը գընում ին իրանց տնիրը:

(Կը շարունակուի)

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՋԵԱՆՑ (ՏՊԱՐԱՆԻ Գ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ
Խմբագիր Փ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ (Հ. ԷՆՖԻԱՋԵԱՆՑ:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ, 6 Іюля 1903 г.
ТИФЛИСЪ.